

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌ-ՄԱՍՆԻԿՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐՆՈՒՄ

ԹԱԲԱՂՅԱՆ Ս. Վ.

Գերմաներենը շատ հարուստ է եղանակավորող բառ-մասնիկներով (Modalpartikel), որոնք, չունենալով այնպիսի քերականական կարգեր, ինչպիսիք են թիվը, հոլովը, սեռը, այդուհանդերձ, որպես կապեր, շաղկապներ, մակբայներ, ածականներ, ձայնարկություններ, գործուն կիրառություն ունեն հատկապես խոսակցական լեզվում: Բառ-մասնիկային բառախմբում իրենց յուրահատուկ տեղն են զբաղեցնում, այսպես կոչված, «համեմունք» բառ-մասնիկները (Wurzwörter), որոնց ամենաբնութագրական առանձնահատկությունը, մեր կարծիքով, ոչ միայն գերմաներենում, այլև բազմաթիվ այլ լեզուներում (հայերենում նման դեր ունեն եղանակավորող բառերը) խոսքին հուզական երանգ հաղորդելն է: Խոսակցության ժամանակ զրուցակիցներն այս բառ-մասնիկների միջոցով իրենց վերաբերմունքն են արտահայտում որևէ հարցի նկատմամբ:

Բառ-«համեմունքները»՝ որպես մարդկային զանազան հույզերի դրսևորման միջոց, կարող են արտահայտել զարմանք, հիացմունք, բարկություն, կասկած, արհամարհանք, դժկամություն, երկյուղ, ցնծություն և այլն: Այս ամենը, ինչ խոսք, կարելի է արտահայտել նաև դիմախաղով և շարժումով: Գերմաներենում մեծ դեր ունեն եղանակավորող բառ-մասնիկները, որոնք, որպես «համեմունքներ», խոսքին հաղորդում են «աղի, կծու, սուր, քաղցր, համեղ ու անհամ» երանգներ: Նման բառ-մասնիկների բազմաթիվ օրինակներ կան դասական և ժամանակակից գրողների ստեղծագործություններում՝ Աննա Զեգերս, Առնոլդ Յվայգ, Հանս Ֆալլադա, Էրիխ Մարիա Ռեմարկ, Թոմաս Մանն և այլն: Դրանք շատ են հանդիպում մամուլում և գիտական աշխատություններում: «Համեմունք»-բառեր քիչ են կիրառում գերմաներենին տիրապետող այլազգիները, որոնք հիմնականում զգուշանում են սխալներ անելուց և ավելի քիչ կամ էլ բնավ չեն գործածում դրանք, ուստի նրանց խոսքը գրեթե «անհամ» է և անհամոզիչ: Եթե որևէ մեկը նպատակ ունի խոսքն առավել համոզիչ և հուզական դարձնել, գործածում է նման բառ-մասնիկներ, և նրա լեզուն դառնում է հյութեղ¹: Պատահական չէ դրանց՝ նաև «համեմունք» բառ-մասնիկներ անվանումը, գրում է Վ. Մ. Պրորոկովան²:

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Вдов, ченко П. С.,** *Распределение классов слов в диалогической и монолог, чешской речи, яТеор, яя, япракт, кая, нгв, ст, чешкогояоп, сан, яяреч, яГорьк, й,я1977.*

² **Пророкова В. М.,** *я Слова— "пр, правы", я слова— "заплаты" (Модальные част, цыя вя немецком я языке, яМ., я1991, яс. я5).*

Նշենք որ, այս բառ-մասնիկները խոսակցական լեզվում ավելի մեծ դրսևորում ունեն հարց-պատասխան հարաբերակցության մեջ: Այսպես, Was soll ich denn jetzt machen?- Ի՞նչ պետք է անեմ ես հիմա. denn-ը հաղորդում է և վախի, և անկարողության, և բարկության երանգներ, իսկ Sei doch nicht dumm! Չհիմարանաս կամ՝ Հիմար չլինես նախադասության մեջ doch-ն արտահայտում է հորդոր, կշտամբանք: Այստեղ, իհարկե, մեծ դեր է խաղում համատեքստը: Կամ՝ Was ich auch dachte-Ինչպես էլ որ ես մտածեմ (այս պարագայում երկմտանք չկա): Այսպիսի օրինակները բազմաթիվ են: Սակայն չի կարելի ընդունել, որ թեպետ այդ բառ-մասնիկները հաղորդում են ուժեղ հուզական երանգ, սակայն միշտ չէ, որ դրանց արտահայտած իմաստները որոշակի են: Իսկ «համեմունք» բառ-մասնիկը ցույց է տալիս խոսողի հուզական ռեակցիան ինչ-որ գործողության կամ էլ գրուցակցի նկատմամբ՝ Mochten Sie etwa noch ein Stuck Kuchen? Betretenes Schweigen oder Heiterkeit, da etwa von den Anwesenden als Zeichen dafür interpretiert wird, das Gastgeberin nicht will und nicht wunscht, daß jemand noch ein Stuck Kuchen ißt³. - Երևի էլի մի կտոր թխվածք [վերցնեք], քար լռությունը հազիվ թե ներկաներից մեկին դրդեր նշանով անգամ ցույց տալ, որ հյուրընկալ տանտիրուհին չի կամենում, որ ինչ-որ մեկը ևս մեկ կտոր թխվածք վերցնի:

Ներկայացնենք առավել կիրառական բառ-մասնիկները:

Aber (բայց) շաղկապից առաջացել է նույնանուն «համեմունք» բառ-մասնիկը: Սակայն պարտադիր չէ, որ այն որպես «համեմունք» թարգմանվի բայց, սակայն, այն կարող է նաև այլ թարգմանություններ ունենալ. դա կախված է բառ-մասնիկի արտահայտած հուզական երանգից, ենթատեքստից: Օրինակ՝ Ist die aber habsch - Այ թե ինչքան լավիկն է (արտահայտում է զարմանք, հիացմունք):

Aber- ը՝ որպես «համեմունք» կարճ պատասխան խոսքում aber ja կամ aber nein ձևերով շեշտում է դրական կամ բացասական պատասխանի կարևորությունը: Այն առանձին կարող է արտահայտել նաև դժգոհություն, մերժում, առարկություն: Օրինակ՝ Ich gehe ganz gerne allein- sagte das Mädchen. “Aber, aber”-antwortete der Junge - Ես հաճույքով մենակ կգնայի,- ասաց աղջիկը: «Բա չէ»,- պատասխանեց տղան (առարկություն):

Auch (ևս, նույնպես, էլ) արտահայտում է նույնության իմաստ: Օրինակ՝ Auch der Vater war zu Hause - Հայրն էլ էր տանը (Հայրը նույնպես տանն էր): Կամ՝ Jetzt können Sie sprechen. Aber vergessen Sie auch nicht die geringste Einzelheiten, horen Sie⁴ - Իսկ հիմա խոսեք, բայց նաև ոչ մի մանրուք չմոռանաք, լսեցի՞ք:

³ Remarque E. M., *Drei Kameraden, Moskau, 1966, S. 66.*

⁴ Kellermann B., *Das blaue Band, Berlin, 1963, S. 21.*

Հարցական նախադասություններում “auch”-ը գործածելով՝ խոսակիցը ակնկալում է դրական պատասխան, ինչպես՝ Kannst du diese Arbeit auch machen? Ich will arbeiten, und da werde ich's auch können - Իսկ դու կարո՞ղ ես այդ աշխատանքը կատարել: Ես ուզում եմ աշխատել, և ես էլ կկարողանամ անել: Ընդհանուր առմամբ, “auch”-ով հարցերը շատ կիրառելի են գերմաներենում և բարբառներում:

“Bloß” և “nur” «համեմունք» բառ-մասնիկներն ունեն միայն իմաստը, այստեղից էլ՝ դրանց կիրառության սահմանափակ բնույթը: Դրանք նաև ածականներ են և նախադասության մեջ լրացնելով գոյական անդամին՝ դառնում են որոշիչ. Bloß-ը՝ ավելի հաճախ բանահյուսության մեջ և բանավոր խոսքում, իսկ nur-ը՝ չեզոք գեղարվեստական ոճերում: Aus bloßer Phantasie hatte er Angst- Անգամ երևակայելուց նա վախենում էր: Bloß-ը արտահայտում է եզակիության երանգ: Ich habe nur ein Wunsch - Ես միայն մեկ ցանկություն ունեմ: Nur-ը ևս ածական է և արտահայտում է նույն երանգը:

Այս երկու բառ-մասնիկները նաև հոմանիշներ են և կարող են փոխարինել միմյանց: Երկուսն էլ ցույց են տալիս, թե զրուցակիցը ինչքանով է հետաքրքրված հաղորդվելիք նյութով, որի համար շատ կարևոր է խոսակցից ինչ-որ բան (ստույգ) իմանալը: Օրինակ՝ Wer war das Mädchen nur? - Արդյոք ո՞վ էր այդ աղջիկը: Er konnte es bestimmt, aber woher? - Նա հաստատ գիտեր նրան, բայց որտեղի՞ց: Երբեմն այդ բառ-մասնիկները կարող են արտահայտել անհանգստության երանգ: Օրինակ՝ Sie soll bloß nicht Stewardess werden - Միայն թե նա չդառնա ուղեկցորդուհի:

Denn-ը (որովհետև, քանի որ) նախադասությանը հաղորդում է պատճառահետևանքային բնույթ, ինչպես՝ Der Lehrer wird rechlich zu tun haben, und so wirft sich Hermann Wachter in die Arbeit - Ուսուցչի գործերը շատ են, և այդ պատճառով էլ ուսուցիչը խրված է աշխատանքի մեջ:

Denn-ը հարցական նախադասություններում գործածվում է կարծես թե որևէ բան ճշտելու համար: Օրինակ՝ Wie heißen Sie denn - Դե, ի՞նչ է ձեր անունը: Kann man an den Bild etwas anmdern?-fragte der Junge. Was denn?-war die Antwort - Կարո՞ղ ենք նկարում ինչ որ բան փոխել,- հարցրեց տղան: -Դե, ինչպես,- եղավ պատասխանը:

Denn-ը կարող է արտահայտել ուրախություն, դժգոհություն, վախ: Օրինակ՝ Was haben Sie uns zu sagen - Դե, ինչ ունեք մեզ ասելու (դժգոհություն):

Doch (սակայն, համենայն դեպս, ինչն է): Օրինակ՝ Sie sind doch krank?- Համենայն դեպս, դուք հիվանդ եք (համոզվածություն):

Doch-ը կիրառվում է այն դեպքում, երբ պետք է ցույց տալ, որ գործողությունը կարող էր չկատարվել ինչ-որ հանգամանքների պատճառով, բայց, այնուամենայնիվ, կատարվում է, ինչպես Du

weiß gar nicht, wie glücklich ich bin einen wirklichen Freund hier zu haben. Doch, doch-sagte sie ernst. Ich weiß schon - Դու բնավ չգիտես, թե ինչքան երջանիկ եմ այստեղ իսկական ընկեր ունենալու շնորհիվ: Ոչ,- ընդհակառակը,- ասաց աղջիկը, ես արդեն գիտեմ:

Լեզվաբան Օ. Բեհագելի պնդմամբ, լեզվում հաճախ հանդիպում է “kann doch” արտահայտությունը, որը համառության, համոզության և ստիպողականության երանգներով ցույց է տալիս, որ գործողությունն անպայման կատարվում է՝ հակառակ արգելքների և այլ հանգամանքների⁵: Doch- ը հանդես է գալիս նաև ja և gewiß բառերի հետ միասին՝ առավել շեշտելով դրանց արտահայտած իմաստները, օրինակ՝ Ja doch պատասխանը նշանակում է՝ արժե, իհարկե:

Eben- ը, որպես ածական, նշանակում է հարթ, հավասար: Օրինակ՝ ebene Fläche- հարթ տարածություն, իսկ որպես մակբայ՝ հենց, հենց այդպես, հենց հիմա: Halt-ը խոսակցական լեզվում նշանակում է կանգնել, չշարժվել տեղից, որը, սակայն, կապ չունի halt «համեմունք» բառ-մասնիկի հետ: Օրինակ՝ Ich habe halt kein Glück-իմ բախտը չի բերում: Ավստրիայում, Բավարիայում, Շվեյցարիայում eben-ի փոխարեն խոսակցական լեզվում (բարբառներում) կիրառվում է halt-ը, այսինքն՝ այս բառ-մասնիկները նաև հոմանիշներ են: Շատ գործածական է eben doch (համեմայն դեպս) ձևը: Ինչպես, Es gibt eben doch Menschen, die keine Angst haben - Համեմայն դեպս կան մարդիկ, որոնք վախ չունեն:

Eigentlich (իսկական, բնական) ժամանակակից գերմաներեում հանդես է գալիս որպես և ածական, և մակբայ և բառ-մասնիկ: Այն մեծ կիրառություն ունի հարցական նախադասություններում, օրինակ՝ Was trinkst du eigentlich zum Fruhschluck? - Իրականում ի՞նչ ես խմում նախաճաշի ժամանակ: Այս բառի կիրառությունը ցույց է տալիս զրուցակիցներից մեկի՝ մյուսից հապշտապ և ճիշտ տեղեկություն ստանալու ցանկությունը: Հարց տվողը զրուցակցին կարծես ստիպում է տալ կատարյալ և կտրուկ պատասխան:

Etwa (մոտավորապես, գրեթե, համարյա). որպես «համեմունք»- բառ ավելանում է նաև ինչպես, օրինակ իմաստով՝ առանց հարցանշանի: Օրինակ՝ Ich lese deutsche Bücher gern, wie etwa Gothe, Schiller, Heine- Ես հաճույքով եմ կարդում գերմաներեն գրքեր, ինչպես, օրինակ՝ Գյոթե, Շիլլեր, Հայնե: Այն կիրառվում է հարցական, պատմողական և բացականչական, հրամայական նախադասություններում: Այս բառ-մասնիկի կիրառությունը հարցական նախադասությանը հաղորդում է այնպիսի երանգ, որ կարծես հարց տվողը պատասխանողին ստիպում է տալ միայն բացասական պատասխան: Soll sie etwa dem Tochter fugen? - Մի՞թե նա պետք է ենթարկվի աղջկան:

⁵ Behagel O., *Die deutsche Sprache, Halle/Saale, 1955, S. 237.*

Zu etwa ձևը մեծ տարածում ունի հատկապես խոսակցական լեզվում: Թարգմանվում է՝ մոտավորապես, կարելի է ասել: Meine Kursarbeit war in etwa der beste - Իմ կատարած աշխատանքը, կարելի է ասել, ամենալավն էր:

Ja (այո) ձայնարկություն է, սակայն, որպես բառ-մասնիկ, ունի համաձայնության, հաստատունության երանգներ: Օրինակ՝ kammst du mit?-Ja - Գալի՞ս ես ինձ հետ: -Այո: Այստեղ Ja- ն ձայնարկություն է, նաև՝ դրական պատասխան: Նույն կերպ նաև՝ Ja, dieses Spiel war für mich sehr interessant - Իհարկե, այդ խաղը ինձ շատ հետաքրքիր էր: Հարցական նախադասություններում Ja-ն զրուցակցին հիշեցնում է ինչ-որ բանի մասին կամ էլ նրան «ստիպում» է անպայման որևէ նորություն բացահայտել: Հենց այս իմաստներն էլ նախադասությանը հիշեցման, բացահայտման երանգ են հաղորդում: Օրինակ, Du weißt ja, wie das ist- Չէ որ դու գիտես, ինչպես է դա լինում: Կամ՝ Da bist du ja- Դա դու ես, չէ՞:

Mal (einmal) մակբայ է, ունի մի անգամ, ինչ-որ մի ժամանակ իմաստները: Որպես բառ-մասնիկ, ավելի շատ կիրառվում է mal-ը, իսկ einmal-ը սակավ գործածական է: Այն պատմողական նախադասությանը հաղորդում է մտերմական երանգ՝ Horen sie mir mal jetzt. Դե, հիմա ինձ լսեք: Հաճախ այն՝ որպես «համեմունք» բառ-մասնիկ, կարող է արտահայտել խնդրանք, հորդոր, ինչպես՝ Sagen Sie mal, wie alt sind Sie? - Դե, ասեք, խնդրում եմ, քանի՞ տարեկան եք: Կամ՝ Können wir gleich mal hingehen? - Մենք կարող ենք հենց հիմա գնալ այնտեղ: Հաճախ գործածվում է einmal բառաձևը, որով խոսողը շեշտել է ուզում իր ասածի անհերքելիությունը: Այն կարելի է թարգմանել ինչ ուզում ես ասա, ոչինչ չես կարող անել:

Schon-ը, որպես բառ-մասնիկ, արտահայտում է. 1. Ժամանակային իմաստ, օրինակ, Heute ist ja schon Donnerstag-Այսօր արդեն հինգշաբթի է: 2. Նշանակում է՝ միայն դա և ոչ մի այլ բան՝ որպես հոմանիշ allein բառին, ինչպես՝ Schon der Gedanke daran ist mir schrecklich- Հենց միայն միտքը դրա մասին ինձ տհաճ է: 3. Կիրառվում է պատմական, հարցական և հրամայական նախադասություններում և հաստատական շեշտադրում է արտահայտում կատարվելիք գործողության նկատմամբ, ինչպես՝ Das machen wir schon - Դա մենք հիմա կանենք: Հատկապես հարցական նախադասության մեջ ենթադրել է տալիս, որ խոսակիցը պետք է միայն բացասական պատասխան տա, օրինակ՝ Wen interessiert das schon?- Ինչո՞վ է դա հետաքրքիր:

Vielleicht- ն առաջացել է մակբայից, թարգմանվում է՝ երևի թե, հավանաբար, կարող է պատահել, գուցե և, միգուցե և նման իմաստներով: Որպես «համեմունք» բառ-մասնիկ, արտահայտում է զարմանք, հեզմանք, ակսոսանք: Օրինակ՝ Du bist vielleicht ein armer Kerl - Ա՛յ թե խղճուկն ես: Կամ՝ Du machst vielleicht Vorschlag - Ա՛յ թե

առաջարկ արեցիր:

Wohl-ը, որպես մակբայ, նշանակում է՝ լավ, հիանալի, հիասքանչ: Այն բնութագրում է մարդու ֆիզիկական վիճակը, ինքնագգացողությունը: Գործածվում են նաև wohler և am wohlsten համեմատության աստիճանները: Համեմատություն են ցույց տալիս նաև besser am besten բառերը: Դրանք կարող են մեկը մյուսին փոխարինել: Որպես «համեմունք» բառ-մասնիկ, Wohl-ը կիրառվում է պատմողական նախադասություններում: Օրինակ՝ Du hast wohl noch Zeit - Երևի դու դեռ ժամանակ ունես: Հաճախ Wohl-ը չի թարգմանվում որպես առանձին բառ, քանի որ համարժեքը չունի: Օրինակ՝ Du bist wohl verrückt geworden - Դու, ինչ է, գժվել ես: Անշուշտ, այն այնքան էլ հարցման նման չէ, և կարծես պատասխան էլ չի ակնկալվում:

Այսպիսով, «համեմունք» բառ-մասնիկները լեզուն հարստացնում են հուզական նրբերանգներով, այն դարձնում ավելի հյութեղ և պատկերավոր:

МОДАЛЬНЫЕ СЛОВА-ЧАСТИЦЫ В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ

ТАБАГЯН С. В.

Резюме

В разговорной речи собеседники часто обмениваются репликами, выражая таким образом свое отношение к сказанному. Посредством интонации и модальных частиц, называемых словами-«приправами» (Wurzworter), собеседники выражают те или иные эмоции – радость и горе, удивление, сомнение, раздражение, просьбу и жалость и т. д. Эти модальные частицы можно встретить в материалах периодической печати, научных трудах, в художественных произведениях. Употребление слов-«приправ» в немецком языке предполагает правильное употребление модальных частиц.